**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌԻ ՄԱՐԶ**
**ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

ՀՀ Լոռու մարզի Գուգարք գյուղ, Հեռ. 5-24-76

N 150
*25 դեկտեմբեր 2017թ.*

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Նալբանդյան.

Ներկայացնում ենք Գուգարք համայնքի ավագանու 2017 թվականի 8-րդ նիստի թիվ 19, 20, 21, 22, 23, 24, 25-Ն, 26-Ն, 27 և 28 որոշումները

ԳՈՒԳԱՐՔ **ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Աշոտ Աշուղյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ


Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գուգարք համայնք

ՀՀ, Լոռու մարզ, գ.Գուգարք, 5-24-76 gugarqgyux@yandex.ru


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի **N 19**

### ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԱՐՍԵՆ ԲԱԼԱՅԱՆԻ՝ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 22 հոդվածի 3-րդ մասի՝*

2017 թվականի հոկտեմբերի 17-ից դադարել են Գուգարք համայնքի ավագանու անդամ Արսեն Զավենի Բալայանի՝ ավագանու լիազորությունները ( մահացել է 17.10.2017թ.):

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՔՆԱՐԻԿ
2. ԱՇՈՒՂՅԱՆ ՏԻԳՐԱՆ
3. ԴԱՐԲԻՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ
4. ԻՑՈՅԱՆ ՄԵԼԱՆՅԱ

5. ՀԱԿՈԲՅԱՆ ՍՄԲԱՏ

6. ՂԱԶԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ

7. ՄԻԿԻՉՅԱՆ ՀԱՄԼԵՏ

8. ՍԱՐԳՍՅԱՆ ՄԱՐԻԵՏԱ

9. ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՒՈՐԳ

10. ՍԱՔԱՆՅԱՆ ԿԱՄՈ

**Համայնքի ղեկավար՝** ԱՇՈՏ ԱՇՈՒՂՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գուգարք համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գուգարք, 5-24-76 gugarqgyux@yandex.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի **N 20**

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի հանրապետության օրենքի 18 հոդվածի 21 կետը,*

*<<Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 75 հոդվածը՝*

Ավագանին որոշում է.

1. Թույլատրել օրենքով սահմանված կարգով՝ աճուրդ-վաճառքով օտարել Գուգարքի կադաստրային քարտեզի 06-031-0061-0225 ծածկագրի 0,0024 հա բնակելի կառուցապատման գործառնական նշանակության բնակավայրի հողամասը ՝ ավտոտնակի կառուցման նպատակով(փոստային հասցեն՝ Գուգարք, փողոց 1, 14/41 հողամաս) ։

2.Աճուրդի մեկնարկային գինը՝ հողամասի կադաստրային լրիվ արժեքը:

3. Սույն որոշման ընդունման պահից չեղյալ ճանաչել Գուգարք համայնքի ավագանու 2015 թվականի հունիսի 18-ի <<Համայնքային սեփականություն համարվող հողամասի օտարման թույլտվություն տալու մասին >> N 14 որոշումը:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՔՆԱՐԻԿ
2. ԱՇՈՒՂՅԱՆ ՏԻԳՐԱՆ
3. ԴԱՐԲԻՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ
4. ԻՍՈՅԱՆ ՄԵԼԱՆՅԱ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՄԲԱՏ
6. ՂԱԶԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ
7. ՄԻԿԻՉՅԱՆ ՀԱՄԼԵՏ
8. ՍԱՐԳՍՅԱՆ ՄԱՐԻԵՏԱ
9. ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՒՈՐԳ
10. ՍԱՔԱՆՅԱՆ ԿԱՄՈ

**Համայնքի ղեկավար՝** ԱՇՈՏ ԱՇՈՒՂՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գուգարք համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գուգարք, 5-24-76 gugarqgyux@yandex.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի **N 21**

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 1 մասի 21 կետով, հաշվի առնելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 187 հոդվածը՝*

Ավագանին որոշում է.

Գուգարքի 1-ին փողոցի 2 շենքի թիվ 36 բնակարանը ուղղակի վաճառքով , մեկ քառակուսի մետրը մեկ հազար դրամով օտարել նույն բնակարանի բնակիչ Կամո Կառլենի Սաքանյանին:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՔՆԱՐԻԿ
2. ԱՇՈՒՂՅԱՆ ՏԻԳՐԱՆ
3. ԳԱՐԲԻՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ

4. ԽՍՈՅԱՆ ՄԵԼԱՆՅԱ

5. ՀԱԿՈԲՅԱՆ ՍՄԲԱՏ

6. ՂԱԶԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ

7. ՄԻԿԻՉՅԱՆ ՀԱՄԼԵՏ

8. ՍԱՐԳՍՅԱՆ ՄԱՐԻԵՏԱ

9. ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ

10. ՍԱՔԱՆՅԱՆ ԿԱՄՈ

**Համայնքի ղեկավար** ԱՇՈՏ ԱՇՈՒՂՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գուգարք համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գուգարք, 5-24-76 gugarqgyux@yandex.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի **N 22**

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 21 կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76 հոդվածով՝*

ավագանին որոշում է.

Գուգարքի կադաստրային քարտեզի 06-031-0061-0228 ծածկագրի 0.00294հա հողամասը (փոստային հասցեն՝ Գուգարք, փողոց 1, 14/43 ) օրենքով սահմանված կարգով տրամադրել վարձակալության կառուցապատման իրավունքով տարեկան 500դրամ վարձավճարով (մեկնարկային գին): Վարձակալության ժամկետը՝ 10տարի:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՔՆԱՐԻԿ
2. ԱՇՈՒՂՅԱՆ ՏԻԳՐԱՆ
3. ԴԱՐԲԻՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ

4. ԻՍՈՅԱՆ ՄԵԼԱՆՅԱ

5. ՀԱԿՈԲՅԱՆ ՍՄԲԱՏ

6. ՂԱԶԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ

7. ՄԻԿԻՉՅԱՆ ՀԱՄԼԵՏ

8. ՍԱՐԳՍՅԱՆ ՄԱՐԻԵՏԱ

9. ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ

10. ՍԱՔԱՆՅԱՆ ԿԱՄՈ

**Համայնքի ղեկավար՝** ԱՇՈՏ ԱՇՈՒՂՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գուգարք համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գուգարք, 5-24-76 gugarqgyux@yandex.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի **N 23**

ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ , ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 28 կետով՝*

ավագանին որոշում է.

1.Հաստատել Գուգարքի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը ՝ըստ կից հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

3.Սույն որոշման ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Գուգարքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 29-ի << Գուգարքի համայնքապետարանի և ենթակա հիմնարկների աշխատակազմերի 2017 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 19 որոշման **N 1 հավելվածը**:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՔՆԱՐԻԿ

2. ԱՇՈՒՂՅԱՆ ՏԻԳՐԱՆ

3. ԴԱՐԲԻՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ

4. ԻՍՈՅԱՆ ՄԵԼԱՆՅԱ

5. ՀԱԿՈԲՅԱՆ ՍՄԲԱՏ

6. ՂԱԶԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ

7. ՄԻԿԻՉՅԱՆ ՀԱՄԼԵՏ

8. ՍԱՐԳՍՅԱՆ ՄԱՐԻԵՏԱ

9. ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՈՐԳ

10. ՍԱՔԱՆՅԱՆ ԿԱՄՈ

**Համայնքի ղեկավար՝** ԱՇՈՏ ԱՇՈՒՂՅԱՆ

*Հավելված*
Գուգարքի համայնքի ավագանու
N 23 որոշման, 19.12.2017

*Գուգարքի համայնքապետարանի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը*

1. հաստիքների թվաքանակը՝ 22
2. աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ ) |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 270000 |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 200000 |
| Համայնքի ղեկավարի խորհրդական | 1 | 130000 |
| Համայնքի ղեկ. օգնական | 1 | 130000 |
| Աշխատակազմի քարտուղար | 1 | 190000 |
| Գլխավոր մասնագետ | 2 | 170000 |
| Առաջատար մասնագետ-հաշվապահ | 1 | 160000 |
| Առաջատար մասնագետ | 1 | 160000 |
| Առաջին կարգի մասնագետ-գանձապահ | 1 | 130000 |
| Առաջին կարգի մասնագետ-ֆինանսիստ | 1 | 130000 |
| Առաջին կարգի մասնագետ | 3 | 130000 |
| Երկրորդ կարգի մասնագետ | 2 | 120000 |
| | | |
| Քարտուղարուհի | 1 | 115000 |
| Վարորդ | 2 | 115000 |
| Պահակ | 1 | 72760 |
| Տեխնիկ.աշխատող | 1 | 72760 |
| Բանվոր | 1 | 72760 |

Գուգարք համայնքի ղեկավար Ա.Աշուղյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գուգարք համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գուգարք, 5-24-76 gugarqgyux@yandex.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի **N 24**

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության մասին օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 5, 6 կետերը և <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15 հոդվածի 3-րդ կետը՝*

ավագանին որոշում է.

Սահմանել գույքահարկի արտոնություն

Կախյան Արմեն Սերոժի - 417070դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՔՆԱՐԻԿ
2. ԱՇՈՒՂՅԱՆ ՏԻԳՐԱՆ
3. ԴԱՐԲԻՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ
4. ԻՍՈՅԱՆ ՄԵԼԱՆՅԱ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ՍՄԲԱՏ
6. ՂԱԶԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ
7. ՄԻԿԻՉՅԱՆ ՀԱՄԼԵՏ
8. ՍԱՐԳՍՅԱՆ ՄԱՐԻԵՏԱ
9. ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՒՈՐԳ
10. ՍԱՔԱՆՅԱՆ ԿԱՄՈ

**Համայնքի ղեկավար՝** ԱՇՈՏ ԱՇՈՒՂՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գուգարք համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գուգարք, 5-24-76 gugarqgyux@yandex.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի **N 25-Ն**

## ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 18 և 19 կետերով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 8,9,10,11,12,13,14 հոդվածներով, <<Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 56 հոդվածի 2 մասով, 72 հոդվածի 1-ին մասի 1 կետի գ ենթակետով՝*

ավագանին որոշում է.

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գուգարք գյուղական համայնքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը 2018 թվականի համար՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության Իրավական ակտերի փորձաքննության վարչություն ՝ պետական իրավական փորձաքննություն անցկացնելու նպատակով:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՔՆԱՐԻԿ
2. ԱՇՈՒՂՅԱՆ ՏԻԳՐԱՆ
3. ԴԱՐԲԻՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ
4. ԻՍՈՅԱՆ ՄԵԼԱՆՅԱ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ՍՄԲԱՏ
6. ՂԱԶԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ
7. ՄԻԿԻՉՅԱՆ ՀԱՄԼԵՏ
8. ՍԱՐԳՍՅԱՆ ՄԱՐԻԵՏԱ
9. ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՒՈՐԳ
10. ՍԱՔԱՆՅԱՆ ԿԱՄՈ

**Համայնքի ղեկավար**

ԱՇՈՒՂՅԱՆ ԱՇՈՏ

*Հավելված՝*
*Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի*
*Գուգարք համայնքի ավագանու*
*2017 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 25-Ն որոշման*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

### ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ **տասնհինգ հազար դրամ**,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **երեսուն հազար դրամ,**
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հիսուն հազար դրամ**,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հիսուն հազար դրամ**,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **յոթանասուն հազար դրամ**.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հազար հինգ հարյուր դրամ**,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **երկու հազար հինգ հարյուր** դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ **հազար հինգ հարյուր դրամ**

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ **հինգ հազար դրամ.**

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **հարյուր հիսուն հազար դրամ.**

6) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **երեսուն հազար դրամ.**

8) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **հիսուն հազար դրամ.**

9) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **երկու հազար դրամ**
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **երեք հազար հարյուր դրամ**
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **չորս հազար դրամ**
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **վեց հազար հարյուր դրամ**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **յոթ հազար վեց հարյուր**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար վեց հարյուր դրամ

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **երկու հազար դրամ**

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **երեք հազար հարյուր դրամ**

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **չորս հազար դրամ**

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **վեց հազար հարյուր դրամ**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **յոթ հազար վեց հարյուր**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար վեց հարյուր դրամ

10) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ հարյուր տասը դրամ մեկ քառակուսի մետրի համար.

11) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ հինգ հազարից մինչև **հիսուն հազար դրամ**,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ **հարյուր հազար դրամ**,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ **երկու հարյուր հազար դրամ**

դ. խաղատների համար՝ **մեկ միլիոն դրամ**,

ե. շահումով խաղերի համար՝ **երեք հարյուր յոթանասունհինգ հազար դրամ**,

զ. վիճակախաղերի համար՝ **հարյուր հազար դրամ**

12) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **երկու հազար դրամ**

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝՝ **երեք հազար հարյուր դրամ**

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար հարյուր դրամ

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **յոթ հազար վեց հարյուր**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **տասը հազար հարյուր դրամ**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **տասնհինգ հազար հարյուր դրամ**

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **հինգ հարյուր դրամ**

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **հազար հարյուր դրամ**

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար վեց հարյուր դրամ

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար հարյուր դրամ

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար վեց հարյուր

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ յոթ հազար վեց հարյուր դրամ

13) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **երկու հազար դրամ**,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **երեք հազար հինգ հարյուր դրամ**,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ **հազար հինգ հարյուր դրամ**,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

14) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **հիսուն հազար դրամ**

15) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ **հինգ հազար դրամ**.

16) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հիսուն հազար դրամ

17) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,**

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **հինգ միլիոն դրամ,**

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **յոթ միլիոն դրամ**,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **տասը միլիոն դրամ**

## ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.-հինգ հազար դրամ

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.-հինգ հազար դրամ

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.- հինգ հազար դրամ

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.- հինգ հազար դրամ

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.-հինգ հազար դրամ

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.-հինգ հազար դրամ

7. Աղբահանության վճարը սահմանվում է՝

1) կենցաղային աղբի համար ֆիզիկական անձանցից՝

ա. Համայնքի տարածքից աղբահանություն կազմակերպելու համար ամսեկան՝

ա. մեկ անդամից բաղկացած ընտանիքից՝ 150դրամ

բ. երկու անդամից բաղկացած ընտանիքից՝ 300դրամ

գ. երեք և ավելի անդամներից բաղկացած ընտանիքից՝ 400դրամ:

բ. Բազմաբնակարան շենքերի բնակիչներից աղբահանության վճար՝ ամսեկան 80դրամ մեկ անձի համար

2) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 3000 դրամ,

բ. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 10000 դրամ:

Աղբահանության վճարի հաշվարկման հաշվետու ժամանակահատվածը օրացուցային ամիսն է:

8. Համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը – **հինգ հազար դրամ**

9. Համայնքում առկա ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և շինություններում , այդ թվում ՝ հասարակական, հանրային, ծառայությունների մատուցման, արտադրական, արդյունաբերական շենքերում և շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ՝

1) առևտրի, այդ թվում շուկաների, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականցվող շինությունների մասով՝ ամսեկան 400դրամ
2) հյուրանոցների, հյուրանոցային տնտեսության ծառայություններ, ինչպես նաև այլ գործունեություն իրականացնող հասարակական շինությունների մասով՝ ամսեկան 400դրամ
3) արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ ամսեկան 400դրամ
4) կրթական , մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ ամսեկան 400դրամ
5) շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն՝ ամսեկան 600դրամ:

9. Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար՝ ամսեկան 2000դրամ յուրաքանչյուր երեխայի համար:

10. Համայնքի շիրմատան տարածքում ոչ տեղաբնակներին 2քմ*4քմ հողատարածք հատկացնելու համար՝ **50000դրամ:**

11. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ **հինգ հարյուր դրամ** փոխհատուցման վճար:

Աշխատակազմի քարտուղար՝ Հ.Սարգսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գուգարք համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գուգարք, 5-24-76 gugarqgyux@yandex.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի **N 26-Ն**

### ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 5 կետը, <<Բյուջետային համակարգի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածը՝*

ավագանին որոշում է.

Հաստատել Գուգարք համայնքի 2018 թվականի բյուջեն համաձայն հավելվածի:

Կողմ -10　　　　Դեմ -0　　　　Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՔՆԱՐԻԿ
2. ԱՇՈՒՂՅԱՆ ՏԻԳՐԱՆ
3. ԴԱՐԲԻՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ
4. ԻՍՈՅԱՆ ՄԵԼԱՆՅԱ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ՍՄԲԱՏ
6. ՂԱԶԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ
7. ՄԻԿԻՉՅԱՆ ՀԱՄԼԵՏ

8. ՍԱՐԳՍՅԱՆ ՄԱՐԻԵՏԱ

9. ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ

10. ՍԱՔԱՆՅԱՆ ԿԱՄՈ

**Համայնքի ղեկավար՝** **ԱՇՈՏ ԱՇՈՒՂՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գուգարք համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գուգարք, 5-24-76 gugarqgyux@yandex.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի **N 27**

### <<ԱՅՐՆ ՄԱՅՆԻՆԳ>> ՍՊԸ-ԻՆ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հիմք ընդունելով <<Ընդերքի մասին >> Հայասփանի Հանրապեփության օրենքի 17 հոդվածի 3-րդ մասը և հանրային լսումների արձանագրությունը՝*

ավագանին որոշում է.

Տալ իր համաձայնությունը << ԱՅՐՆ ՄԱՅՆԻՆԳ>> ՍՊԸ-ին ՝ ՀՀ Լոռու մարզի Բազումի երկաթի երևակումում սահմանված կարգով կատարելու երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ :

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՔՆԱՐԻԿ
2. ԱՇՈՒՂՅԱՆ ՏԻԳՐԱՆ
3. ԴԱՐԲԻՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ

4. ԻՍՈՅԱՆ ՄԵԼԱՆՅԱ

5. ՀԱԿՈԲՅԱՆ ՍՄԲԱՏ

6. ՂԱԶԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ

7. ՄԻԿԻՉՅԱՆ ՀԱՄԼԵՏ

8. ՍԱՐԳՍՅԱՆ ՄԱՐԻԵՏԱ

9. ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՒՈՐԳ

10. ՍԱՔԱՆՅԱՆ ԿԱՄՈ

**Համայնքի ղեկավար՝** ԱՇՈՏ ԱՇՈՒՂՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գուգարք համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գուգարք, 5-24-76 gugarqgyux@yandex.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի **N 28**

ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂԱՏԵՍՔԻ, ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 21 կետով, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 01.06.2010թ. 186-Ն հրամանով, ՀՀ կապռավարության 13.10.2005թ. 1916-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 29.12.2005թ. 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 29.12.2011թ. << Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգի >> 17 կետը, Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 20.06.2017թ. N58 դրական եզրակացությունը՝*

*ավագանին որոշում է.*

1. Գուգարք համայնքի վարչական սահմաններում գտնվող 06-031-0113 ծածկագրի 0.52323 հա գյուղատնտեսական արոտավայր նպատակային և գործառնական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել որպես էներգետիկայի,կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակայության նշանակության հողամաս , իսկ հողամասի գործառնական նշանակությունը՝ կոմունալ ենթակառուցվածքների հողամաս:
2. Քանի որ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հետ կապված սուբյեկտների անճշտությունների ուղղման համար Գուգարք համայնքի վարչական սահմաններում գտնվող 06-031-113 ծածկագրի 0.52323հա էներգետիկայի,կապի, տրանսպորտի, կոմունալ

ենթակառուցվածքների նպատակային նշանակության հողամասի նկատմամբ գոյություն չունեն սեփականության որևէ իրավունք հաստատող փաստաթղթեր և այդ հողամասը ՀՀ կառավարության 13.10.2005թ. 1916-Ն որոշմոմբ վրիպմամբ փոխանցված չէ համայնքին, առաջնորդվելով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 186-Ն հրամանի 2-րդ գլխի կետերով՝ վերոհիշյալ հողամասի նկատմամբ ճանաչել Գուգարք համայնքի սեփականության իրավունքը:

3. 10-օրյա ժամկետում տեղեկացնել անշարժ գույքի նկատմամբ իրավունքները գրանցող պետական մարմնին՝ կցելով սույն որոշմոն սահմանված կարգով հաստատված պատճենը:

4. Օրենքով սահմանված կարգով փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո հողամասն ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքի հողային հաշվեկշռում:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՔՆԱՐԻԿ
2. ԱՇՈՒՂՅԱՆ ՏԻԳՐԱՆ
3. ԴԱՐԲԻՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ
4. ԻՍՈՅԱՆ ՄԵԼԱՆՅԱ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ՍՄԲԱՏ
6. ՂԱԶԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ
7. ՄԻԿԻՉՅԱՆ ՀԱՄԼԵՏ
8. ՍԱՐԳՍՅԱՆ ՄԱՐԻԵՏԱ
9. ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՒՈՐԳ
10. ՍԱՔԱՆՅԱՆ ԿԱՄՈ

**Համայնքի ղեկավար՝** **ԱՇՈՏ ԱՇՈՒՂՅԱՆ**